

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱԿԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒՄՆԵՐԻ 2008 ԻՆՆԵՐ

Պատրաստվի՛ր առաջիկա ընտրություններին

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ						
ԵՐԿՈՒՇԱԲԹԻ	ԵՐԵՔՇԱԲԹԻ	ՉՈՐԵՔՇԱԲԹԻ	ՉԻՆՉԱԲԹԻ	ՈՒՐԱԹ	ՇԱԲԱԹ	ԿԻՐԱԿԻ
1	2	3	4	5	6	7
8	9	10	11	12	13	14
15	16	17	18	19	20	21
22	23	24	25	26	27	28
29	30					

ՅՈՒՆԻՍԵՊՏԵՄԲԵՐ						
	ՉՈՐԵՔՇԱԲԹԻ	ՉԻՆՉԱԲԹԻ	ՈՒՐԱԹ	ՇԱԲԱԹ	ԿԻՐԱԿԻ	
		1	2	3	4	5
6	7	8	9	10	11	12
13	14	15	16	17	18	19
20	21	22	23	24	25	26
27	28	29	30			

Թաղապետի ընտրություններ՝ Լուրարաշեն, Էրեբունի, Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն համայնքներում և ավագանու անդամների ընտրություններ՝ Լուրարաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ, Էրեբունի, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն համայնքներում

Թաղապետի ընտրություններ՝ Լոր Լորք և Կենտրոն համայնքներում և ավագանու անդամների ընտրություններ՝ Լոր Լորք, Լորք-Մարաշ, Ավան, Դավիթաշեն, Շենգավիթ և Կենտրոն համայնքներում

Ընտրություններ՝ Արարատի, Կոտայքի, Վայոց ձորի և Սյունիքի մարզերում

Ընտրություններ՝ Արմավիրի, Լոռու և Տավուշի մարզերում

Ընտրություններ՝ Արագածոտնի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում

Սիրելի՛ ընթերցողներ

Սովորաբար մենք մեծ ուշադրություն ենք դարձնում նախագահական ընտրություններին: Բայց չէ՛ որ մեր առօրյա կյանքի վրա ամենամեծ ազդեցություն ունեցող որոշումները կայացվում են համայնքի ներկայացուցիչների և ոչ պետական այրերի կողմից: Ահա թե ինչու կարևոր ընտրությունները դեռ առջևում են:

Երկրի նախագահը չի լուծում շենքերի վերանորոգման, աղբահանության ու քաղաքի մաքրման հարցերը, այլ ձեր համայնքի ավագանին և ղեկավարն են պատասխանատու դրանց համար: Նրանք այն մարդիկ են, ովքեր պարտավոր են ավելի լավ իմանալ ձեր համայնքի կարիքները, քան մեծամասնական կամ համամասնական ցուցակներով ընտրված պատգամավորները:

Սա նախատեսված երկու հավելվածներից առաջինն է, որը նպատակ ունի ձեզ օգնելու ընտրություններում կատարել գիտակցված որոշում:

Այս թողարկումն անդրադառնում է համայնքների հիմնախնդիրներին և ընդհանուր գծերով ներկայացնում տեղական քաղաքական գործիչների լիազորությունները: Այստեղ հաշվի է առնված գրեթե ամեն ինչ՝ տնտեսական խնդիրներից (4-5-րդ էջ) մինչև ընտրությունների արդար անցկացման հարցերը (2-րդ և 7-րդ էջեր): Բացի այդ, ամենայն հավանականությամբ, համայնքային պաշտոններում կտեսնեք նաև կանանց, չնայած նրանք անշուշտ այնքան շատ չեն լինի, որ կարողանան ապահովել Հայաստանի կանանց ներկայացվածությունը (էջ 6): Հիշեք նաև, որ չնայած կոռուպցիան կարող է սկիզբ առնել ամենաբարձր մակարդակներում (էջ

6), սակայն համայնքի ներկայացուցիչները վճռական դեր ունեն կոռուպցիան խթանելու կամ կասեցնելու գործում: Մի՛ ազատեք նրանց պատասխանատվությունից: Եվ մի՛ մոռացեք, թե ամձամբ դուք ի՞նչ կարող եք անել կոռուպցիայի դեմ պայքարում, և ինչպես կարող եք ճշտել ընտրողների ցուցակները (էջ 2):

Հետևեք հաջորդ թողարկմանը հոկտեմբեր ամսին, որում հիմնականում կանդիդատներն են համայնքի ղեկավարների կողմից հիմնախնդիրների լուծման հատուկ ծրագրերին:

Դուք և ձեր համայնքն արժանի եք լավագույն ղեկավարությանը:

Հիշեք դա, երբ այս աշնանը գնաք քվեարկելու:

Լավագույն մաղթանքներով՝
Amnewsservice.org աշխատակազմ

Այս համարում

- Պայքար կոռուպցիայի դեմ **Էջ 3**
- Փլուզված տնտեսության վերականգնում **Էջ 4-5**
- Կանանց ներկայացվածությունը քաղաքական կյանքում **Էջ 6**
- Եթե վտանգված է ձեր քվեարկության գաղտնիությունը **Էջ 7**

Ընտրողների ցուցակների ճշգրտությունը կախված է ձեզնից. Ստուգեք ընտրողների ցուցակները ձեր համայնքում



Լուսանկարը՝ Ալեքսիսի

ԸՑԽՅ-ի կամավորները փետրվարի 5-ին՝ նախագահական ընտրություններից երկու շաբաթ առաջ, ծշտում են ընտրողների ցուցակները (աջակողմյան նկար): Նախագահական ընտրությունների նախնական ցուցակներում դեղինով նշված են առկա անճշտությունները, որոնք պետք է ուղղվեն մինչև ընտրությունները:

Ի՞նչ է Ընտրողների ցուցակների խորհրդատվական հանձնաժողովը

Ընտրողների ցուցակների խորհրդատվական հանձնաժողովի (ԸՑԽՅ) կազմում ընդգրկված են համայնքի անդամներ, որոնք ընտրությունից 40 օր առաջ ընտրողների ցուցակներով տնից տուն են գնում ու ստուգում դրանց ճշգրտությունը: Չնայած ԸՑԽՅ-ը չի կարող ուղղումներ կատարել (դրա իրավունքն ունի միայն Անձնագրերի և վիզաների վարչությունը), սակայն կամավորները քաղաքացիներին տեղեկացնում են ընտրողների տվյալներում ուղղումներ կատարելու ընթացակարգերի մասին: Անճշտությունների դեպքում կամավորները տրամադրում են բոլոր անհրաժեշտ դիմումների ձևերը, որոնք պետք է լրացվեն և ներկայացվեն Անձնագրերի և վիզաների վարչության գրասենյակ, ինչպես նաև՝ օգնում են քաղաքացիներին դրանք լրացնելիս: Ընտրողների ցուցակները ճշտելուց բացի, կամավորները քաղաքացիներին բաժանում են հուշաթերթիկներ՝ իրավական ընթացակարգերի մասին օգտակար տեղեկատվությամբ: ԸՑԽՅ-ը համայնքային նախաձեռնություն է, այն պաշտոնական կազմակերպություն չէ և հաճախ կազմված է ընտրատեղամասերի կամավորներից, սովորաբար նրա կազմում ընդգրկվում են անձնագրային բաժնի աշխատակիցներ, տեղական ոստիկանության սպաներ, ՅԿ-ների անդամներ և համայնքի ղեկավարներ, ինչպես նաև՝ համայնքի շահագրգիռ անդամներ: Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (Ալեքսիս) ԸՑԽՅ-ներում ունի միայն խորհրդատվական և օժանդակող դեր, սակայն չի ղեկավարում դրանց աշխատանքները:


Իրականացված աշխատանք

ԸՑԽՅ-ը Հայաստանում գործում է 2003 թվականից և նպաստել է ընտրողների ցուցակների ճշգրտմանը: 2008 թ. նախագահական ընտրությունների ժամանակ ԸՑԽՅ-ը գործել է Հայաստանի 1923 ընտրական տեղամասերից 137-ում. ամբողջ հանրապետությունում 169 կամավորներ ստուգել են 148885 ընտրողների տվյալներ: Ընտրողների ցուցակներում հայտնաբերվել են մոտավորապես 3300 անճշտություններ, որոնք տրամադրվել են Անձնագրերի և վիզաների վարչությանը: ԸՑԽՅ-ի թե՛ զծով ստացվել է ավելի քան 4000 հեռախոսազանգ, որոնց տրվել է անվճար խորհրդատվություն ընտրողների ցուցակների ստուգման կարգի վերաբերյալ, և ավելի քան 1700 դիմումաձևեր են ներկայացվել շահագրգիռ քաղաքացիների կողմից:

Եթե ցանկանում եք ԸՑԽՅ-ին հայտնել ընտրողների ցուցակում առկա անճշտության մասին կամ ունեք որևէ հարց ընտրողների ցուցակների մասին, ապա ո՞ւմ պետք է դիմել:

Նախ պետք է դիմել Ալեքսիս-ի հայաստանյան գրասենյակ (ստորև տես հեռախոսահամարները)՝ պարզելու, թե արդյո՞ք ԸՑԽՅ կա ձեր համայնքում: Եթե այո, ապա ձեզ կտրամադրվի լրացուցիչ տեղեկատվություն:

Ինչպե՞ս կարող եմ օգնել ԸՑԽՅ-ին առաջիկա ընտրությունների ընթացքում



ԸՑԽՅ-ը ներգրավում է կամավորներ տեղական հանձնաժողովների, այդ թվում՝ ամենաշաբաթյա հանդիպումների և տնային շրջայցերի համար: Առաջիկա ընտրությունների համար կազմավորվել են ԸՑԽՅ-ներ Երևանում, Սիսիանում, Գորիսում և Կապանում: Այն անձինք, որոնք հետաքրքրված են ԸՑԽՅ-ներ նախաձեռնելու հարցում, կարող են կապ հաստատել ԸՑԽՅ-ի համակարգող Համազասպ Դանիելյանի հետ, հեռ.՝ (374 10) 268357, 210357, ներքին համար՝ 26, էլ. փոստ hamazasp@ifesarmenia.am

Գիտեք, որ...

Հայաստանում առաջին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվել են 1996 թ. նոյեմբերի 10-ին

Այս աշնանը Երևանի քաղաքացիներն ընտրելու են 6 քաղապետների և 12 ավագանիների, սակայն հնարավոր է, որ նրանք չպաշտոնավարեն ամբողջ քառամյա ժամկետը, քանի որ ներկայումս Ազգային ժողովում քննարկվում է օրենսդրական փոփոխություններ կատարելու հարցը, որոնց համաձայն այդ ավագանիները փոխարինվելու են 65 անդամից բաղկացած մեկ մեծ ավագանիով, որը նոր ընտրությունների ժամանակ ընտրողներն ընտրելու են համամասնական ընտրակարգով: Ամենաշատ ձայներ ստացած կուսակցության ցուցակի առաջին տեղում գտնվող անձը դառնում է Երևանի քաղաքապետ:

Համայնքապետն այլևս չի կարող հեռացվել իր պաշտոնից առանց Սահմանադրական դատարանի որոշման (հին Սահմանադրությամբ կառավարությունը կարող էր ազատել համայնքապետին իր պաշտոնից՝ տեղական ավագանու և մարզպետի կամ միայն մարզպետի առաջարկությամբ: 2005-ին ընդունված սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ Սահմանադրական դատարանը տալիս է եզրակացություն կառավարության կողմից համայնքի ղեկավարի պաշտոնանկության հիմքերի վերաբերյալ):

Համայնքապետարաններն ու Երևանի քաղապետարանները պատասխանատու են հետևյալ հանրային ծառայությունների իրականացման համար. աղբահանություն, բազմաբնակարանային շենքերի պահպանություն, նախադպրոցական (մանկապարտեզներ) և մասնագիտական (երաժշտական դպրոցներ, մարզական հաստատություններ, համայնքային ակումբներ, արհեստագործական կենտրոններ և ցուցահանդեսներ, ինչպես նաև՝ արտածրագրային զարգացման կենտրոններ) կրթական օջախների, քաղաքային տրանսպորտի և գերեզմանոցների պահպանություն:

Օրենքի համաձայն՝ համայնքապետարանը պարտավոր է հանրությանը տեղեկացնել առաջիկա հանդիպման մասին առնվազն յոթ օր առաջ՝ բնակիչներին հասանելի վայրերում փակցնելով օրակարգը (այդ թվում՝ հանդիպման ամսաթիվը, ժամը և վայրը):

Ի՞նչ իրավասություններ ունեն ՏԻՄ ներկայացուցիչները

- | | |
|--|---|
| <p>Ավագանու անդամի պարտականություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • Հաստատել և վերահսկել բյուջեի կատարումը: • Սահմանել տեղական տուրքերը և վճարները: • Սահմանել առևտրի, հանրային սննդի և հանրային ծառայությունների կետերի գործառնությունների կանոնները: • Կայացնել որոշումներ համայնքի գույքի ձեռքբերման, կառավարման և վաճառքի վերաբերյալ: • Սահմանել տեղական տուրքերի ու վճարների դրույքաչափերը: • Հաստատել համայնքի աշխատակազմի կառուցվածքը և աշխատավարձերը: • Որոշումներ կայացնել միջհամայնքային միությունների ձևավորման և համայնքի տարածքին վերաբերող վարչական մուծումների վերաբերյալ: • Նախաձեռնել տեղական հանրաքվեներ, և այլն: | <p>Համայնքապետի պարտականություններն են.</p> <ul style="list-style-type: none"> • Սահմանել համայնքային զարգացման ընդհանուր քաղաքականություն: • Նախաձեռնել և նախագահել ավագանու նիստերը: • Հաստատել աշխատակազմի կազմավորման և գործառնությունների կանոնակարգերը: • Կազմել աշխատակազմի կառուցվածքը: • Կազմել համայնքի բյուջեն և զարգացման ծրագիրը: • Ավագանուն ներկայացնել համայնքի սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների կազմավորման կամ լուծարման մասին իր հավանությունը: • Կազմակերպել ավագանու որոշումների իրականացումը: • Հանդես գալ որպես համայնքապետարանի ներկայացուցիչ: |
|--|---|

«Ձեռնարկ տեղական ավագանու անդամների և ավագանու անդամների համար» գրքուկից հսրի ղեկավար Ջառա Չատինյան ԱՄՆ ԱՅՁ/ՏԻԾ 3



Ավելի շատ
խոսում են,
քան գործում.
ոմանք մեղադրում են Եվրո-
պայի խորհրդի
քարտուղար
Թերի Դևիսին
և ԵՄ-ին՝
իշխանությունների
նկատմամբ
խիստ պատժա-
միջոցներ չկիրառելու
համար:

**Ռիտա Կարապետյան
Պատերազմի և խաղաղության
լուսաբանման ինստիտուտ**

Թեև Հայաստանի իշխանություններին ժամանակ է տրվել մինչև հունվար իրականացնել Եվրախորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵՄԽԿ) բանաձևի պահանջները, սակայն առաջին քննությունը նախատեսվում է սեպտեմբերին: Ամռանը կատարած այցելի ընթացքում ԵՄԽԿ բարձրաստիճան պաշտոնյաները պարզ նշել են, որ եթե Հայաստանի իշխանությունները մինչև աշուն նշանակալի քայլեր չձեռնարկեն նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած իրադարձությունների և մարդու իրավունքների խնդիրների լուծման ուղղությամբ, երկրի անդամակցությունը Եվրոպայի խորհրդում կորսվի լուրջ վտանգի տակ: «Սա առաջիկա շաբաթների ընթացքում հրատապ լուծում պահանջող խնդիր է», - ասել է ԵՄԽԿ նախագահ Լուիս Մարիա դե Պույոնը հուլիսի վերջին Հայաստան այցելության ընթացքում: Նա ասել է, որ Եվրոպայի խորհուրդը կվերանայի Հայաստանի առաջընթացը սեպտեմբերի 6-ի աստիճանի ընթացքում: ԵՄԽԿ-ն որոշել է Հայաստանին ժամանակ տալ մինչև հաջորդ տարվա հունվարը, որպեսզի երկիրը կատարի ԵՄ պահանջները. դրանք սահմանվել էին փետրվարին կայացած վիճախարյց նախագահական ընտրությունների և դրան հաջորդած մարտի 1-2-ի արյունահեղության հետևանքով ստեղծված քաղաքական ճգնաժամից հետո:

Հայաստանն առայժմ խուսափում է Եվրոպայի արգելից. Իշխանությունների հետընտրական հաջորդ քննությունը սեպտեմբերին է

Հայաստանը դեռ կարող է զրկվել ԵՄԽԿ-ում ձայնի իրավունքից, եթե նրան չհաջողվի կատարել այս պահանջները: Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանն ասում է, որ իր երկիրն արդեն սկսել է առաջ շարժվել: «Մեզ պետք չեն կարճաժամկետ լուծումներ և ֆորմալ առաջարկներ, - ասել է նա: - Կարևորն այն է, որ այժմ դրվող հիմքերը և կայացվող որոշումներն ուղղված լինեն ապագային»:

Սակայն առաջին նախագահ, ընդդիմության առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանը սուր քննադատության ենթարկեց ԵՄԽԿ որոշումը՝ ասելով, թե Վեհաժողովը խուսափել է իր պարտականություններից: Հայաստանի գծով ԵՄԽԿ համագեղակցողներ ժողով Կոլոմբիեին և Ջոն Պրեսկոտին նա բնութագրել է որպես Հայաստանի կառավարության պաշտպաններ: «Եվրոպայի խորհուրդը ցույց տվեց, որ ընդունակ չէ ստիպելու Հայաստանի իշխանություններին սահմանված ժամկետում կատարել 1609 բանաձևի պահանջները, և դա Եվրոպայի խորհրդի անվճարականության և անկախությանը պայմանական արդյունքն է», - ասել է Տեր-Պետրոսյանը:

Ապրիլի 17-ին ընդունված 1609 բանաձևը պահանջում էր «ազատ արձակել այն անձանց, ովքեր կալանավորվել են առերևույթ արհեստական և քաղաքական շարժառիթներ ունեցող մեղադրանքներով», փոփոխություններ կատարել հավաքների մասին օրենքում, նաև արյունահեղության անկախ հետաքննություն իրականացնել: Այն նաև կոչ է անում երկխոսություն ծավալել իշխանությունների և ընդդիմության միջև:

Յունիսի 25-ին ընդունված Վեհաժողովի նոր՝ 1620 բանաձևում ասված է. «Ավստանք հայտնելով իր պահանջների կատարմանն ուղղված կոնկրետ քայլերի իրականացման ուղղությամբ կապակցությամբ, Վեհաժողովն ընդունում է, որ Հայաստանի իշխանություններին տրամադրված ժամանակը կարճ էր»:

Որոշվել է Հայաստան ուղարկել ԵՄ Մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Դանաթը:

բերգին, որպեսզի վերջինս սեպտեմբերին գեկուցի ԵՄԽԿ կողմից պահանջվող հետաքննության և բանտարկյալների ազատ արձակման հետ կապված հարցերի վերաբերյալ:

Համագեղակցողներից մեկը՝ Կոլոմբիեն, «Ազատություն» ռադիոկայանին ասել է. «Հայաստանը սպասում է, որ մենք օգնենք իրեն, այլ ոչ թե միայն դատապարտենք: Հայաստանի իշխանությունները պետք է ապացուցեն, որ Հայաստանը դուրս է գալիս այն փուլից, որում պատահաբար հայտնվել է մարտի 1-ից հետո»:

«ժառանգություն» կուսակցության ղեկավար, Ստրասբուրգ մեկնած Աժ պատվիրակության ասակաթիվ ընդդիմադիր անդամներից մեկը՝ Բաֆֆի Դովիանիայանը, ի նշան բողոքի դուրս է եկել միստերի դահլիճից՝ ասելով, թե կասեցնում է իր անդամակցությունը ԵՄԽԿ-ի հետ, քանի դեռ Հայաստանը չի բավարարել Եվրոպական չափանիշները:

«Հայաստանը ձախողել է ժողովրդավարության քննությունը» - ասել է նա: - Այստեղ դեռևս տասնյակ քաղաքատարկյալներ կան, և նրանք պետք է ազատ արձակվեն հիմա, այլ ոչ թե մյուս տարվա հունվարին»:

«ժառանգություն» կուսակցության քարտուղար Ստեփան Սաֆարյանը բանաձևը որակել է որպես «ևս մեկ ճշմարտանման սուտ»: Նրա կարծիքով՝ դա այնպիսի տպավորություն է ստեղծում, իբր Հայաստանի իշխանությունները բարեփոխումներ են իրականացնում, ինչը, սակայն, այդպես չէ: Նրա խոսքով՝ անհրաժեշտ է լուրջ հինստիտուցիոնալ բարեփոխումներ իրականացնել, ինչից ներկայումս իշխանությունները խուսափում են:

Երևանում Լրատվամիջոցների կովկասյան ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Իսկանդարյանն ասում է, որ Հայաստանին լրացուցիչ ժամանակ տրամադրելու որոշումը անսպասելի չէր: «ԵՄԽԿ-ն շահագրգռված չէ կիրառել խիստ պատժամիջոցներ Հայաստանի նկատմամբ, ինչպես ավելի վաղ եղավ Բելառուսի դեպքում, - ասում է նա: - ԵՄԽԿ-ն շահագրգռված է, որ երկրում վերացվեն լարվածությունը և ճգնաժամը, և գերադասում է դա անել բանակցությունների սե-

ղանի շուրջը, այլ ոչ թե կոշտ հակամարտության միջոցով»:

Իշխանությունները և իշխանամետ պատգամավորներն ասում են, թե իրական առաջընթաց են արձանագրել ԵՄԽԿ պահանջների կատարման ուղղությամբ: Օրինակ՝ նրանք նշում են, որ մարտի 1-2-ի դեպքերի հետաքննության նպատակով ստեղծվել է հանձնաժողով:

Իշխանամետ «Բարգավաճ Հայաստան» խմբակցության անդամ Նաիրա Ջոհրաբյանը «ամենախաղեայն» երևույթ է համարել այն, որ հանձնաժողովի կազմում ընդգրկվել են արտախորհրդարանական ուժերի ներկայացուցիչներ:

Տեր-Պետրոսյանը հրաժարվել է մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: Մինչդեռ Դովիանիայանն առաջարկել է հանձնաժողովի կազմում ընդգրկել մարտի 1-2-ի դեպքերից հետո ձերբակալված երկու պատգամավորների՝ Սյասնիկ Մալխասյանին և Սասուն Միքայելյանին, ինչը, սակայն, մերժվել է: Վերջերս երևանում անցկացված հանրահավաքի ժամանակ Տեր-Պետրոսյանն ասել է, որ ներկայումս իր միակ պահանջը քաղաքատարկյալներին ազատ արձակելն է: Եթե դա տեղի ունենա, ասել է նա, ինքը պատրաստ է երկխոսություն սկսելու իշխանությունների հետ:

Դատախազությունը պնդում է, որ Հայաստանում քաղաքատարկյալներ չկան, սակայն Տեր-Պետրոսյանն ասում է, որ ներկայումս կալանքի տակ գտնվող իր բազմաթիվ համակիրները ձերբակալվել են քաղաքական դրդապատճառներով: ԵՄԽԿ նոր բանաձևը դիտարկվում է որպես նախագահ Սարգսյանի ժամանակավոր հաղթանակ:

«Նոյյան տապան» լրատվական գործակալության վերլուծաբան Հարություն Մանուկյանն ասում է, որ այդ որոշումը նախագահին հնարավորություն է տալ ժամանակ շահելու իր իշխանությունն ամրապնդելու համար:

Համաժողովրդական շարժման ներկայացուցիչ Լևոն Ջուրաբյանը նկատել է, որ բանաձևը Հայաստանի իշխանություններին գոնե պահում է ԵՄԽԿ վերահսկողության ներքո, քանի որ երկիրն դեռևս սպառնում է պատժամիջոցների վտանգը:

Կոռուպցիայի հարցն ավելի՛ է լրջացել

**Մարիանա Գրիգորյան
eurasianet.org**

Հայաստանի իշխանությունները խոստացել են հետևողական պայքար մղել կոռուպցիայի դեմ, սակայն ոմանք բերհավատ են. որքա՞ն իրական և հեռու կարող է այն հասնել, և արդյո՞ք քաղաքականությունը կխթանի այդ արշավը:

Վերածննդի դարաշրջանի քարոզչի եռանդով վարչապետ Տիգրան Սարգսյանը հայտարարել է, թե կոռուպցիան Հայաստանի «թիվ առաջին հիմնախնդիրն է, որը խափանում է բոլոր բարեփոխումները»:

Միևնույն ժամանակ, նախագահ Սերժ Սարգսյանը հանրությանը հավաստիացրել է, որ իր վարչակազմը «թափանցիկ» և շարունակական պայքար կմղի կաշառակերության դեմ: Այս խոստումները հիմնավորելու նպատակով վերջին ամիսներին թիրախ են դարձել հարկային ծառայությունը, մաքսային կոմիտեն ու ոստիկանությունը:

Հուլիսի 7-ին պաշտոնանկ արվեց Ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության պետ Ալվինա Զաքարյանը: Չնայած ոչ մի բացատրություն չտրվեց աշխատանքից ազատվելու վերաբերյալ, սակայն վերլուծաբանները մատնանշում են վարչապետ Սարգսյանի հուլիսի 26-ին արած հայտարարությունը, որն ուղղված էր կաշառակերության «լուրջ հիմնախնդիրներին» այդ վարչությունում: Սարգսյանը հայտարարել է, թե կաշառք վերցնողները երկրում հաշվվում են «հազարներով»:

Պաշտոնապես մեկնարկած խիստ միջոցառումների շարքն ուղեկցվեց մաքսային կանոնակարգերի փոփոխությամբ, ինչպես նաև, ըստ հաղորդագրությունների՝ իշխանամետ գործարարների սեփականություն հանդիսացող ընկերություններում՝ հարկային ստուգումներով:

Այնուամենայնիվ, Հայաստանում կոռուպցիայի դեմ հայտարարված պատերազմը առ այսօր տարաբնույթ արձագանքների տեղիք է տվել: Օրինակ՝ ընդդիմությունը պնդում է, թե մինչ այժմ ձեռնարկված միջոցներն ավելի շատ շուռ են հիշեցնում, քան իրական գործողություն: «Աշխատակազմի փոփոխությունները համակարգային բնույթ չեն կրում, - մեղադրում է առաջին նախագահի համակիր Սուրեն Սուրենյանը: - Իշխանությունները պարզապես փորձում են հասարակությանը և միջազգային հանրությանը ցույց տալ, թե իրենք ինչ-որ բան են անում: Սակայն այդ ամենն իմիտացիոն բնույթ է կրում»:

«Սոցիոմետր» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ահարոն Ադիբեկյանը առարկում է՝ պնդելով՝ պնդելով, թե կառավարության կողմից ձեռնարկվող խիստ միջոցները չեն կարող իմիտացիոն համարվել: «Միայն է ասել, որ իշխանությունները սկսել են շուռ սարքել՝ ի պատասխան հնչած մտահոգությունների, - ասում է Ադիբեկյանը: - Հակակոռուպցիոն ծրագիրը Հայաստանում ձախողվեց վերջին տարիներին, և դա ընդունում են նաև իշխանությունները. նրանք փորձում են իրական քայլեր ձեռնարկել, մի բան, որ դրական է»:

2008-2012 թթ. հակակոռուպցիոն ծրագրի ռազմավարությունը դեռևս մշակման փուլում է: Հետխորհրդային Հայաստանում կոռուպցիայի դեմ առաջին արշավը սկսեց հանգուցյալ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը 2003 թ.: Սակայն նախաձեռնության անարդյունավետության պատճառով այն հիմնականում վարկաբեկվեց: 2003-2007 թթ. «Թրանսփարենսի ինթերնեյշնլի» հակակոռուպցիան կազմակերպության կողմից գրանցված կոռուպցիայի ընկալման տարեկան համաթիվը ցույց տվեց, որ Հայաստանում կոռուպցիայի ընկալման ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել: 2007 թ. վարկաբեկում (3,0՝ տասը բալանոց սանդղակում) Հայաստանը գտնվում է այնպիսի երկրների շարքում, ինչպիսին են Մոլդովան, Ալժիրը, Բելիզը և Դոմինիկյան Հանրապետությունը:

«Թրանսփարենսի ինթերնեյշնլի» հայաստանյան մասնաճյուղի ղեկավար Ամալյա Կոստանյանը կարծում է, որ կառավարության շարունակական քաղաքական հակառակությունը ընդդիմության հետ դրդել է պատասխանատուներին հանդգնել թերահավատներին, որ այս անգամ այն մտադիր է վերջնականապես վերացնել կոռուպցիան:

Նա հավելում է, որ ի տարբերություն անցյալի, կառավարությունը այժմ առավել հստակ պետք է ցույց տա, թե արդյոք ունի կոռուպցիայի դեմ պայքարելու կա՞մք, թե՞ ոչ:

«Միջին կարգի պաշտոնյաները ձերբակալվում են կաշառակերության մեղադրանքով: Եթե



Ի գորու կլինեն՞ արդյոք իշխանությունները մինչև վերջ իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարը

միջին օղակներում կա կաշառք, սպա դա վկայում է, որ վերեններում նույնպես տեղյակ են դրա մասին, - պնդում է Կոստանյանը: - Եթե ձերբակալվում է միայն մի քանի մարդ, իսկ պայքարը շարունակական բնույթ չի կրում, ուրեմն այն միանշանակորեն չի հանգեցնի որևէ լավ արդյունքի»:

Այնուհանդերձ, թե կառավարությունն իր պայքարում լինի վճռաբեկ և մինչև վերջ գնա, արդյոք պատրաստ կլինի՞ այդ արշավին «զոհարելու նախարարներին, մարզպետներին և բարձրաստիճան պաշտոնյաներին», - կասկածում է նա:

Հանրային կարծիքների ուսումնասիրությանը զբաղվող Ադիբեկյանը վիճարկում է, որ այն փաստը, որ 2003 թ. արշավը բավարար արդյունքներ չտվեց, լրացուցիչ ճնշում է գործարդում կառավարության վրա՝ այս անգամ չսխալվելու պարտադրանքով:

«Եթե ամբողջ համակարգը կոռումպացված է, և դա այդպես է, ապա հրամանները և որոշումներն իրենց նպատակին չեն հասնի, իսկ այդ դեպքում բարեփոխումների շուրջ քննարկումներ չեն կարող լինել, - ասում է Ադիբեկյանը, - հետևաբար, իշխանությունները կանեն ամեն ինչ, որպեսզի հակակոռուպցիոն արշավի

երկրորդ փուլն իրոք արդյունավետ լինի»:

Սակայն ընդդիմության առաջնորդ Տեր-Պետրոսյանը պնդում է, որ մինչև օրս եղած արդյունքները բոլորովին էլ տպավորիչ չեն: «Կառավարությունը բավարարվում է դատարկ դարձվածաբանությամբ և խորհրդային տիպի հանձնաժողովներ ձևավորելով», - ասաց նա հուլիսի 4-ի հանրահավաքի ժամանակ՝ հայտարարելով, որ «ոչ մի խոշոր գործարար դեռևս չի մեղադրվել հարկային խախտումների համար»:

Միևնույն ժամանակ իշխանամետ քաղաքական վերլուծաբան Եվգենի Մամիկոնյանը նախազգուշացնում է, որ կոռուպցիայի տարածումը սկիզբ առավ հենց Տեր-Պետրոսյանի 1991-1998 թթ. նախագահության տարիներին, դեռ հարց է՝ ընդդիմությունն ավելի՞ լավ կլուծի կոռուպցիայի խնդիրը, թե՞ իշխանությունը: Ըստ նրա՝ Հայաստանի վերջին հակակոռուպցիոն արշավը նոր է սկսվել և «գնահատական տալու համար դեռևս շատ վաղ է»:

Հեղինակային իրավունքը՝ Բաց հասարակության ինստիտուտ, 2007
Վերատպագրվում է Բաց հասարակության ինստիտուտի թույլտվությամբ



Արտագաղթը բազմաթիվ հայերի համար դեռևս միակ ելքն է

Օտար, անայի ճամփեքին... Հայերը դեռ լքում են երկիրը՝ տնտեսական ու սոցիալական առավել լավ պայմաններ գտնելու հույսով

Արմինե Ղուկասյան «Սևան» թերթ

«Ծննդավայրս ինձ համար միայն բնակավայր չէր: Ես կապված էի նրան իմ ապրած տարիներով, հիշողություններով, ստեղծած ընտանիքով ու ինձ զգում էի պաշտպանված ու վստահ: Իմ հողի վրա գրել էի կենսագրությունս՝ որպես մանկավարժ, տնօրեն, դեկավար, ու կարծում էի, որ ոչինչ չի կարող բաժանել այն ամենից, ինչ քանն է ու հարազատ...»,- պատմում է սևանցի 57-ամյա Համլետ Մկրտչյանը, ով արդեն տասը տարի ընտանիքի հետ ապրում է ՌԴ-ում:

Մկրտչյանն ու իր ընտանիքը անկախությանը հաջորդած սոցիալ-տնտեսական դժվարությունները և արտագաղթի ողջ ծանրությունը կրեցին իրենց ուսերին: Իշխանությունները փաստում են, որ 1990-ականներից ի վեր ավելի քան 1 մլն հայ է արտագաղթել, որը երկրի բնակչության մոտ մեկ երրորդն է: Ոմանք արտագաղթեցին օրինակական ճանապարհով, ոմանք՝ ապօրինի՝ օգտագործելով կեղծ անձնագրեր և խախտելով մուտքի արտոնագրի ժամկետները: Մյուս մասն էլ արտագաղթում է կտրել-անցնելով փակ սահմանները, այրելով հետդարձի կամուրջները:

Արտագաղթի հիմնական պատճառը գործազրկությունն է: Խորհրդային Միության փլուզումից հետո ամբողջ երկրում արդյունաբերական ձեռնարկությունների գերակշիռ մասը փակվեց՝ առաջացնելով գործազրկության մեծ ալիք և անվստահություն ապագայի նկատմամբ: Գործազրկության ցուցանիշը տարիներ շարունակ եղել է 10-11%՝ միայն վերջին 5 տարում իջնելով 7% (սակայն այս տվյալները չեն արտացոլում գործազրկության ամբողջական պատկերը, սրանք միայն ներառում են վերջերս որպես գործազուրկ գրանցված և ակտիվորեն աշխատանք փնտրողների տվյալները): Բացի այդ, գործազրկության կրճատում տեղի է ունեցել հիմնականում մայրաքաղաքին մոտ բնակավայրերում և քաղաքներում, մինչդեռ մարզերում իրավիճակը դեռ անմխիթար է:

Սևանի զբաղվածության տարածքային կենտրոնի գլխավոր մասնագետ Սամվել Ենոքյանն ասում է, որ Սևանի տարածաշրջանի գործազրկության աստիճանը դեռևս 10,7 տոկոս է կազմում՝ փաստելով, որ Սևանի բնակչության մոտ մեկ երրորդը աշխատանք չունի:

Գործազրկության բարձր ցուցանիշների հետ մեկտեղ արտագաղթի խնդիրը շարունակում է մտահոգության տեղիք տալ: Ըստ գործակալության վիճակագրական տվյալների՝ Սևանի տարածաշրջանից 2007 թ. դուրս է եկել 156 մարդ, վերադարձել է միայն 54-ը: 2008 թ. հունվար-հունիս ամիսների վիճակագրությունը մատնանշում է նույն միտումը՝ 104 մեկնանքներից վերադարձել է 67-ը: Քաղաքից հեռացածների զգալի մասը զոնե ժամանակավորապես ունեցել է աշխատանք:

Երբ Մկրտչյանը 1996-ին կորցրեց տնօրենի պաշտոնը, չհուսահատվեց՝ փորձեց ուղքի

կանգնել, սակայն ապարդյուն: Մեկնեց Վոլգոգրադ, որտեղ բազում դժվարություններ հաղթահարելով՝ հասավ հաջողության:

«Առաջին մի քանի տարիների ընթացքում փորձում էի գտնել իմ տեղը այն հողում և միջավայրում, որն ինձ համար և՛ նոր էր, և՛ օտար, ասում է Մկրտչյանը, ով հիմա տնօրինում է տեղի հայտնի գվարձանների համալիրը, որն իր մեջ ներառում է սրճարան, ռեստորան, տեսախաղեր ու խաղատուն: Փորձությունները հաղթահարում էի ամեն օր: Աշխատանքին զուգահեռ ես հաստատում էի իմ տեղը, որը թեև ինձ չէր, սակայն աստիճանաբար ընդունում էր ինձ: Այժմ ղեկավարում եմ 40 հոգանոց կոլեկտիվը»:

ՀՀ տարածքային կառավարման նախարարության առընթեր միգրացիոն գործակալության պետ Գագիկ Եզանյանի հայտարարությամբ՝ 1992 թ. ի վեր Հայաստանից արտագաղթածների թիվը կազմում է 900 հազարից 1 միլիոն:

Եզանյանը Հայաստանում միգրացիոն իրավիճակը բաժանում է երեք փուլի: Առաջին փուլը 1992-1995 թթ. էին, երբ մեկնողների և ժամանողների 250000 բացասական սալդո էր արձանագրվում: Հաջորդ փուլը 1995-2000 թթ. էին, երբ բացասական սալդոն նվազեց, բայց դեռևս բավական մեծ էր՝ տարեկան տատանվելով 45-60000-ի շրջանակներում: 2001-ից սկսված երրորդ փուլից ի վեր բացասական սալդոն նվազեց՝ հասնելով գրոյի: Կառավարության տվյալներով՝ վերջին մի քանի տարիներին բնակչության որոշ աճ է նկատվել, չնայած շատ արտագաղթողներ դուրս են մնում վիճակագրական տվյալներից:

Ըստ ՄԱԿ-ի Փախստականների գերազույց հանձնակատարի հայաստանյան գրասենյակի՝ Հայաստանը 1999 թվականից ապաստան հայցողների թվով ԱՊՀ երկրների շարքում զբաղեցրել է երկրորդ տեղը ՌԴ-ից հետո: 2003 թ. առաջին կիսամյակի ընթացքում վիճակը կտրուկ փոխվել է. հայցադիմումների թիվը 51%-ով պակասել է 2002-ի նույն ժամանակահատվածի համեմատ:

Նոր աշխատատեղերի ստեղծման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, հասարակության միջին խափի ձևավորման նպատակով ՀՀ կառավարության 2002 թ. մարտի 19-ի N282-Ն որոշմամբ ստեղծվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն»՝ հիմնադրամը: Սա առաջին ազգային կառույցն է, որն իրականացնում է փոքր և միջին ձեռնարկատիրությանը աջակցություն և ուղորտի զարգացմանն ուղղված ծրագրեր: 2002-2006 թթ. պետական աջակցության ծրագրերի իրականացման նպատակով պետական բյուջեից հատկացվել է ավելի քան 1,1 մլրդ դրամ: Կազմակերպության տարեկան զեկույցը փաստում է, որ շուրջ 16000 սկսական և գործող ձեռներեցներ աջակցություն են ստացել:

2007 թվականից կիրառվում է նաև աշխատավարձի մասնակի փոխհատուցման ծրագիրը, որով պետությունը փոխհատուցում է աշ-

խատավարձի 50%-ը, եթե գործատուն աշխատանքի է ընդունում զբաղվածության կենտրոններում գրանցված գործազուրկներին:

Սևանի քաղաքապետ Գևորգ Մալխասյանը Սևանի տարածաշրջանի ապագան պայմանավորում է միջին բիզնեսի զարգացմամբ:

«Համայնքային պաշտոնյաները կարող են և պետք է խթանեն տեղական ներդրումները Սևան լճի տուրիզմի զարգացման նպատակով,- ասում է քաղաքապետը: - Ներկայումս Սևան լճի ափամերձ տարածքի նպատակային օգտագործումը հնարավորություն է ընձեռնելու ստեղծել ոչ միայն ժամանակավոր, այլև շուրջտարյա աշխատատեղեր: Ուրախվի է, որ ավելանում է ներդրողների թիվը, որը միաժամանակ ենթադրում է աշխատուժի պահանջարկ և առափնյա տարածքի զարգացում»:

Գեղարքունիքի մարզպետի, մարզի հինգ քաղաքապետների և Վիեննայի քաղաքապետի երկամյա բանակցությունների շնորհիվ վերջերս ստորագրվեց համաձայնագիր, ըստ որի ամբողջ մարզում և, մասնավորապես, Սևանի տարածաշրջանում իրականացվելու են մի շարք տնտեսական ծրագրեր, որոնց ֆինանսավորումը կատարվելու է երեք եղանակով՝ համաֆինանսավորում, վարկավորում և ներդրումներ:

Դեկտեմբերից Գեղարքունիքի մարզի ցանկացած անհատ և խումբ կարող է ներկայացնել բիզնես ծրագիր:

«Կան գիտելիքներ, բնական ու մարդկային ներուժ, հրաշալի բնաշխարհ, որից պետք է օգտվել», -ասում է Մալխասյանը՝ նշելով, որ հոկտեմբերի 26-ին կայանալիք Սևանի քաղաքապետի ընտրությունների կապաքարի իր պաշտոնը պահպանելու համար: - Առաջիկա ՏԻՄ ընտրություններում իմ նախընտրական ծրագրի առաջնությունը կլինի սևանցուն իր բնակավայրին կապելու և բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ապահովելու խնդիրները»:

Հայաստանի կառավարության համար արտագաղթի կանխման լավագույն լուծումը հայրենիքում ապահով կյանքի ստեղծումն է, որի ակնկալիքով էլ շատերը լքում են երկիրը, օտարության մեջ կազմում ընտանիք, երեխա ունենում, կառուցում իրենց տունը՝ հայրենիքում թողնելով միայն հիշողություններ:

«Աշխատում են և՛ կին, և՛ զավակներ,- ասում է Մկրտչյան: - Չգարձանաք, սակայն օտար հողը ինձ համար դարձել է երկրորդ հայրենիքը: Այնտեղ ես գնահատված եմ, վստակում եմ այնքան, որ կարողանամ բարեկեցիկ ապրել ու ինձ լիարժեք մարդ զգալ: Ունեն շատ ընկերներ, որոնց մեծ մասը Հայաստանից արտագաղթածներ են»:



Սևանի քաղաքապետ Գևորգ Մալխասյան

Լուսավորված՝ Ա. Ղուկասյանի

Սահմանամերձ գյուղերում աղքատությունը մոռացության է մատնել քաղաքականությունը

Յիգալ Շլեյֆեր eurasianet.org

Չիվա փոքր գյուղը գտնվում է Երևանից ընդամենը 120 կմ հեռավորության վրա, սակայն տպավորությունն այնպիսին է, թե աշխարհի ծայրում է:

Մինչ Երևանը շինարարական եռուզեռի մեջ է, նույնիսկ պատրաստվում է ունենալ «Արմանի» ապրանքանիշի խանութ, Չիվան դանդաղորեն անհետանում է: Սա մի վայր է, որտեղ կա ընդամենը մի քանի աշխատատեղ, և գրեթե չկա երիտասարդություն, նրանց մեծ մասը մեկնել է մայրաքաղաք կամ Ռուսաստան՝ աշխատանք փնտրելու:

Գյուղը լեռնաձևով Երևանի ծվարած, թիթեյա կտուրներով, ցածրիկ բարե տների կույտ է, ունի մի քանի կրպակներ, որտեղ հիմնականում վաճառվում են ծխախոտ և խորտիկներ: Միակ նպարեղենի խանութը փակվեց 1991թ. Հայաստանում անկախության ձեռքբերումից հետո, և գյուղը թևակոխեց տնտեսական ճգնաժամի երկարատև շրջան: Այս օրերին շուկայի առջև գտնվող տարածքը ծառայում է որպես հանդիպումների վայր գյուղի տղամարդկանց համար, որտեղ գործազրկության մակարդակը, ըստ գյուղապետի, մոտ 60 տոկոս է:

Տղամարդիկ ասում են, որ չնայած գյուղը ժամանակին ծիրանի, դեղձի և խաղողի խոշոր արտադրող է եղել, բայց ոռոգման խնդիրները և արտադրանքը շուկա հասցնելու դժվարությունները գյուղատնտեսությունը դարձրել են ոչ եկամտաբեր ոլորտ:

Թերևս շարքային հայերի կենսամակարդակի բարձրացումն ու նրանց համար աշխատատեղերի ստեղծումը այն խնդիրներն էին, որով 2008 թ. նախագահական քարոզարշավը աչքի ընկավ, սակայն Չիվայում թեկնածուների խոստումները դատապարտված էին ծախողմանի:

«Մենք որևէ ապագա չենք տեսնում գյուղի համար,- ասում է նախկին հաշվապահ 58-ամյա Սամվել Գրիգորյանը: - Մենք շատ ենք ուզում, որ լինեք այնպես, ինչպես առաջներում էր: Երիտասարդներն ընդմիջում ենք հեռանում ենք գյուղից, և մնում են միայն ծերերը: Կառավարությունը մեզ վրա քիչ ուշադրություն է դարձնում»:

Սակայն վերջին տարիներին կառավարությունը և դոնոր կազմակերպությունները սկսել են ավելի շատ ուշադրություն դարձնել Հայաստանի գյուղական աղքատության հաղթահարման խնդիրներին: 2006 թ. սեպտեմբերին Երևանը հանրությանը ներկայացրեց Գյուղական զարգացման ծրագիրը, որը գերազանցապես հիմնվում էր Սփյուռքի օգնության վրա, նախատեսված էր աջակցել Հայաստանի սահմանամերձ շրջանների աղքատ գյուղերին՝ ենթակառուցվածքների և սոցիալական զարգացման ծրագրերի միջոցով:

Այդ տարվա մարտին Միացյալ Նահանգների կառավարության «Հազարամյակի մարտահրավերներ» կրպակից հանրային կառավարությանը հատկացրեց 235 միլիոն դոլար՝ երկրի գյուղական շրջաններում ոռոգման համակարգերը և ավտոճանապարհները նորոգելու նպատակով:

«Երևանի և մարզերի միջև զարգացման հսկայական տարբերությունը մնում է ժամանակակից Հայաստանի հիմնական մարտահրավերներից մեկը»,- ասել է նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը 2006 թ. Երևանում Հայրենիք-Սփյուռք եռօրյա համաժողովի բացմանը:

Թեև վերջին վեց տարում Հայաստանում արձանագրվել է երկնիշ տնտեսական աճ, սակայն երկրի 3 միլիոնից պակաս բնակչության մեկ երրորդն ունեցող Երևանում է արտադրվում համախառն ներքին արդյունքի կեսից ավելին: Ըստ ՄԱԿ-ի Ձարգացման ծրագրի վիճակագրական տվյալների՝ Հայաստանի շուրջ 1,5 միլիոն գյուղական բնակչության մոտավորապես կեսն աղքատ է:

«Մենք ակնկալում ենք, որ գյուղական ենթակառուցվածքները վերականգնվելուց հետո գյուղերն առավել զրավիչ կդառնան ներդրողների համար, ավելին, հուսով ենք՝ այս գյուղերից հեռացած բնակչության մի մասը կվերադառնա», - ասել է նախկին արտգործնախարար Վարդան Օսկանյանը 2006 թ. այդ համաժողովում:

Սակայն այցելությունը Չիվա և մոտակա գյուղերից մեկը ցույց տվեց ոչ միայն այն դժվարությունները, որոնց բախվում է գյուղի աղքատ բնակչությունը, այլ նաև այն բարդությունները, որի առջև կանգնած է կառավարությունը՝ իր նոր ծրագիրը կյանքի կոչելու ժամապարհին:

Իր գործ գրասենյակում կիսաքանդ փայտե սեղանի առջև նստած Շիվայի գյուղապետ Նաիրի Սարգսյանն ասում է, որ գյուղն արդեն իսկ զգացել է ինչ-ինչ փոփոխություններ կառավարության նոր նախաձեռնության արդյունքում:

Շարունակությունը՝ էջ 5

Սահմանամերձ գյուղերում աղքատությունը մոռացության է մատնել քաղաքականությունը

Սկիզբը՝ էջ 4

Նրա խոսքով՝ վերջերս արդեն կառուցվել է ոռոգման և խմելու ջրի 4,5 կիլոմետրանոց նոր խողովակաշարը: Բացի այդ, նախորդ տարի արդեն ասֆալտապատվել էր գյուղի հիմնական ճանապարհը:

«Դա օգնում է, որ մենք մեզ ավելի քիչ անտեսված զգանք, հատկապես, եթե այս ամենը համեմատենք անցյալի հետ, երբ ոչինչ չէր ձեռնարկվում գյուղական համայնքներին օգնելու համար, - ասում է 38-ամյա գյուղացիները: - Մենք շատ գոհ ենք այն ամենի համար, ինչ արվել է նախատեսվում է մեզ համար, սակայն դա չի նշանակում, որ մեր խնդիրները լուծվել են»:

Այցելությունը գյուղի բուժկետ, որը գտնվում է Սարգսյանի գրասենյակից ներքև, էլ ավելի պարզ է դարձնում պատկերը: Չնայած Գյուղական զարգացման ծրագրի ինտերնետային կայքում գյուղի բուժկետի վերանորոգումը ներառված է ՕԲՄՖԱՄ-ի հետ համատեղ իրականացված աշխատանքների շարքում, սակայն պարզվում է, որ վերջին վերանորոգման աշխատանքները կատարվել են 1997 թ.:

Այսօր մեկսենյականոց բուժկետի պատերը պատված են բորբոսով, պատերի ծեփը մեծ

կտորներով պոկվում է, իսկ ջեռուցում ընդհանրապես չկա: Երբ բուժքրոջը հարցրինք, թե բուժկետն ամենաշատ ինչի կարիք ունի, նա մի րոպե մտածեց, ապա ներկայացրեց իր ցանկությունները, որը զարմացրեց իրենց պարզությամբ: Անկողնային պարագաներ բնանասեղանը ծածկելու համար, վիրահատական մկրատ և նշտար, շնչառական հիվանդությունների համար դեղորայք և նոր վառարան:

«Դիմեցինք մարզպետարան՝ մեր կարիքները հոգալու խնդրանքով, սակայն մեզ պատասխանեցին, որ եղածով յուր գնանք», - ասաց բուժքույր Տանյա Թադևոսյանը, որն իր օրվա մեծ մասն անց է կացնում գյուղի 1000 բնակիչների տները զանգելով: Ծրագրի ինտերնետային կայքում Չիվայուն կատարված աշխատանքների շարքում նշվում է նաև կահույքի միկրոստվություն գյուղի մանկապարտեզին: Սակայն գյուղացիներն ասաց, որ գյուղում նույնիսկ մանկապարտեզ չկա:

Ինտերնետային կայքը, որը ներկայացնում է օգնություն ստացող մոտ 200 գյուղերի մանրամասն քարտեզը և նրանց պատմության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն, ոչինչ չի ասում այն մասին, թե ծրագիրը որքան ֆինանսավորում է ստացել և ծախսել կամ պլանավորում է ծախսել յուրաքանչյուր գյուղում:

Ծրագրի պատասխանատուներն ասում են, որ այդ թվերն այնտեղ ներկայացված չեն՝ ընթացիկ մրցույթներին չվնասելու նպատակով:

Չիվայից 35 կմ ձգվող ոլորապտույտ լեռնային ճանապարհի վերջում գտնվող խաչիկ գյուղը նույնպես ընդգրկված է Գյուղական զարգացման ծրագրում, սակայն տեղի բնակչությունից միայն մի քանիսն են հաստատում, որ երբևիցե լսել են այդ նախաձեռնության մասին:

Երբ հարցրինք ծրագրի մասին, գյուղացիների օգնական Վահան Սարգսյանը ոչ մի հստակ բան չասաց: Ըստ Սարգսյանի՝ չնայած գյուղ խմելու ջուր բերելու նպատակով խողովակաշարի ծրագիրը վերջերս ավարտվել է, սակայն գյուղին իրականում պետք է խորհրդային ժամանակների ոռոգման ջրի խողովակաշարի վերանորոգումը՝ խաչիկի շրջակա դաշտերը ջրելու համար: Գյուղացիների օգնականն ասում է, որ նա չի կարող հաստատ ասել, թե ով է ֆինանսավորել խմելու ջրի խողովակաշարի կառուցումը:

Դեպի վեր խոյացող Արարատ լեռանը մայրող գեղատեսիլ գյուղի կենտրոնից ոչ հեռու երվանդ Չարությունյանը աշխատում է մեքենայի վրա: Խաչիկի նպարեղեմի խանութի տերն ասում է, որ վերջին երկու տարում 1000 բնակչություն ունեցող գյուղից հեռացել է 170 մարդ:

Նրա խոսքերով՝ իրավիճակն էլ ավելի վատ է, քան 1990 թվականների սկզբին՝ Ղարաբաղյան պատերազմի ընթացքում, երբ գյուղը գնդակոծվում էր Ադրբեջանի կազմում գտնվող հարևան Նախիջևանի տարածքից:

«Եթե այսպես շարունակվի, ապա գյուղը կդատարկվի», - ասում է նա ու հավելում, որ բնակչության կրճատմանը զուգընթաց նվազում է նաև գյուղական ապրանքների պահանջարկը:

«Մենք այլևս չենք կարող վաճառել մեր արտադրանքը Երևանում, իսկ դա մեր կարիքները հոգալու միակ միջոցն է: Տարեցտարի վիճակն ավելի ու ավելի է վատանում»:

Երբ հարցրի, թե առաջիկա ընտրությունները փոփոխությունների հույս ներշնչում են, Չարությունյանը ժպտաց:

«Բոլոր քաղաքական գործիչները նախընտրական փուլում խոստանում են օգնել, սակայն ոչինչ չեն անում, - ասաց նա: - Նրանք գեղեցիկ խոսքեր են ասում, սակայն ոչ մի քայլ չեն ձեռնարկում»:

Չեղիակային իրավունքը՝
Բաց հասարակության ինստիտուտի, 2007
Վերատպագրվում է Բաց հասարակության
ինստիտուտի թույլտվությամբ

Միակ խնդիրը տնտեսությունն է.

Համայնքի ղեկավարները կանգնած են տնտեսական ներդրումները խթանելու հիմնախնդրի առաջ

Նազիկ Երանոսյան
«Տուֆաշխարհի առօրյա»

Դժվար կլինի համաձայնել այն մտքի հետ, թե Հայաստանը տնտեսական խնդիրներ ունի, երբ այցելում ես ժամանակակից շենքերի շինարարությամբ, նոր թաղամասերով և մասնավոր շքեղ տներով լի Երևան: Այնուամենայնիվ, երևանյան եռուզեռը չի ներկայացնում Հայաստանի ամբողջական պատկերը. մի շրջայցը փոքր բնակավայրերում ցույց է տալիս տնտեսական լճացման ամբողջական պատկերը:

«Ասում են՝ Երևանը մայրաքաղաք է, ներկայացնալի պիտի լինի. համամիտ են, թող գեղեցկանա, էլի մեր հպարտությունն է: Գյուլնիսի էլ վերականգնում են, աղետի գոտի է՝ սա էլ չեն ժխտում, մարդիկ տարիներով ապրել են տնակներում: Բայց որ Արթիկի ու Արթիկի մասն բնակավայրերի յուրաքանչյուր բնակիչի հոգին «աղետի գոտի» է դարձել, նույնպես հաստատ է», - ասում է 45-ամյա արթիկցի Ստեփան Չիչակյանը:

18000 բնակչություն ունեցող Արթիկը Շիրակի մարզի երկրորդ քաղաքն է: Խորհրդային տարիներին արդյունաբերական կենտրոն համարվող այս քաղաքն իր նշանակությամբ կարևորվում էր ոչ միայն հանրապետության մասշտաբով, այլ նաև դրա սահմաններից դուրս: Ժամանակին այստեղ գործել են 18 արտադրական խոշոր ձեռնարկություններ, որոնցից առաջատար են եղել «Ստեյկլոմա», վակուումային էլեկտրավառարանների գործարանները, ինչպես նաև հանքարդյունահանող «Արթիկտուֆ» արտադրական ձեռնարկությունը: Այս խոշոր արդյունաբերական ձեռնարկություններից յուրաքանչյուրում աշխատել է 200-2500 մարդ, այսինքն՝ աշխատունակ բնակչության շուրջ 70%-ը:

«Մեր գործարանը նախկինում տվել է 5 մլն ռուբլու արտադրանք, դա այն ժամանակների համար էլ էր պատկառելի գումար, այսօր տարեկան շրջանառությունը հազիվ հասնում է 1-2 մլն դրամի: Նույնիսկ ծիծաղելի է որևէ համեմատություն անելը: Նախկինում գործարանում աշխատել է շուրջ 200 մարդ, այսօր՝ հազիվ 7-ը», - պատմում է վակուումային էլեկտրավառարանների գործարանի նախկին տնօրեն Արտավազ Կարապետյանը:

Գործազրկության ցուցանիշները տարբեր են, ըստ Արթիկի զբաղվածության տարածքային կենտրոնի՝ գործազրկվածները բնակչության 10-12%-ն են կազմում, սակայն այդ թիվն ընդգրկում է միայն այն մարդկանց, ովքեր նախկինում զբաղված են եղել և հիմա ակտիվորեն աշխատանք են փնտրում: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության՝ 2006 թ. Շիրակում 105000 մարդ դասակարգվել է որպես տնտեսապես ոչ ակտիվ, որն էլ կազմում է բնակչության մոտ կեսը: Ինչպես մարզերի շատ այլ քաղաքներ՝ Արթիկը նույնպես պայքարում է վերականգնել իր աշխատաշուկան և ակնկալում է օժանդակություն կառավարությունից աշխատատեղեր ստեղծելու և տնտեսությունը զարգացնելու հարցում:

2007 թ. նոյեմբերին ԱՅԹԵՄ-ի անցկացրած հարցմանը Արթիկի քաղաքացիները պատասխանել են, որ նախագահական թեկնածուի ընտ-



Արթիկի երբեմնի հզոր գործարանն այսօր դարձել է խանութ: Շիրակի մարզի նախկին արդյունաբերական կենտրոնի ընտրողները, ինչպես մյուս մարզերում, ակնկալում են նոր տնտեսական հնարավորությունների ստեղծում:

ության ժամանակ ամենակարևոր ուշադրությունը դարձնում են տնտեսական քաղաքականության և գործազրկության վերաբերյալ նրա ունեցած դիրքորոշմանը: Նույն կերպ են պատասխանել նաև Գյուլնիս, Վանաձորի, Սևանի և Զրազդանի 800 հարցվածները: Գործազրկության ու տնտեսական քաղաքականության խնդիրները քվեարկողների մտահոգությունների երկար ցուցակի առաջնային տեղում են:

ԽՍՀՄ փլուզումից հետո ձեռնարկությունները իրար հետևից սկսեցին փակվել, և բնակչության ստվար հատվածը միանգամից հայտնվեց գործազուրկի կարգավիճակում: Ըստ տեղի հարկային ծառայության՝ այսօր Արթիկի աշխատողների 30%-ն աշխատում է առողջապահության, կրթության և այլ բյուջետային հատվածի ու առևտրի ոլորտներում: Չնայած փոքր թիվներին լայն տարածմանը՝ շատ բնակիչներ ասում են, որ դա բավարար չէ:

«Այսօր հարկային դաշտը երկկողմանի ազդեցություն ունի. մի կողմից՝ հնարավորություն է ստեղծվում պետությունը ավելացնելու, սակայն մյուս կողմից՝ այն հարվածի տակ է դնում փոքր ձեռնարկատիրությունը՝ նպաստելով գործազրկության ավելացմանը: Գործատուն չափազորիչ է նոր աշխատատեղեր ստեղծելու», - ասում է քաղաքային ավագանու անդամ Գագիկ Մկրտչյանը, ով զբաղվում է փոքր ձեռնարկատիրությամբ լուսանկարչական ծառայությունների մատուցման ոլորտում: - Առկա է մեկ այլ խնդիր ևս. կան թափուր աշխատատեղեր, որոնք պահանջում են մեղ մասնագիտական իմացություն, սակայն նույնիսկ հանրապետությունում համապատասխան մասնագետներ չկան: Խոսքը միջին մասնագիտական կրթություն ունեցողների պակասի մասին է: Օրինակ՝ «Ստեյկլոմա» գործարանին անհրաժեշտ են լավ խառատներ, ֆրեզերող բանվորներ, բայց երիտասարդներն այսօր նման մասնագիտություններով չեն ուզում աշխատել, հին բանվորներն էլ արդեն տարիքի խնդիր ունեն»:

Ըստ ԱՄՍ ՄԶԳ-ի՝ Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգերի հզորացման ծրագրի տվյալների, Արթիկում աշխատանք ունեցողների ավելի քան կեսը իրենց փոքր ձեռնարկություններում ինքնազբաղվածներն են:

«Ցավոք, Արթիկի աշխատաշուկան շատ փոքր է, այն սահմանափակվում է մի քանի ոլորտներով. վաճառողներ, վարսավիճիկներ, գորգագործներ, համակարգչային օպերատորներ», - ասում է Արթիկի Ջբաղվածության տեղական կենտրոնի գործադիր տնօրեն Սվետլանա Չարությունյանը:

Չարությունյանի ղեկավարած կենտրոնը առաջարկում է կարծածանկետ ծրագրեր տարածաշրջանում գործազրկությունը նվազեցնելու համար: Հարությունյանը փաստում է, որ 2007-ին կենտրոնը առաջարկել է մոտ 25 շինարարական ժամանակավոր՝ 1-3 ամսվա աշխատանքային ծրագրեր: Սակայն, նա նշում է, որ սրանք չեն լուծում քաղաքի գործազրկության հիմնախնդիրը:

Կենտրոնը նաև առաջարկում է պետական ֆինանսավորմամբ վերապատրաստման ծրագրեր և աշխատանքի տեղավորման ծառայություններ: Հարությունյանն ասում է, թե չնայած ինչ-որ չափով հաջողություն ունեցել են գործազրկության ցուցանիշի նվազման հարցում, բայց այնուամենայնիվ, հիմնախնդիրը մնում է չլուծված, քանի որ աշխատանքները ժամանակավոր են և սեզոնային, աշխատողները չեն գրանցվում, իսկ աշխատավարձերը ցածր են:

Համայնքի ներկայացուցիչները համաձայն են, որ աշխատատեղեր ստեղծելն իրենց համար առաջնային խնդիր է: Նրանցից ոմանք պնդում են, որ այդ խնդիրը պետք է լուծում ստանա ազգային ծրագրերի միջոցով:

«Մեր շրջանում առկա գործազրկությունն այսօր հանրապետության ընդհանուր խնդիրներից է, չնայած Արթիկում այն ավելի զգալի է, և միայն համայնքի ուժերով վերացնելն անհնար է», - ասում է քաղաքային ավագանու անդամ, ՀՀ սո-

ցիալական ապահովագրության պետական հիմնադրամի Արթիկի տարածքային կենտրոնի տնօրեն Արսեն Աբրահամյանը: - Ես այն դիտարկում եմ զլրբալ հիմնախարցրելի համատեքստում: Ավելի լայն տարբերակված մոտեցում է պետք, քանի որ ստեղծված իրավիճակի պատասխանատուն միայն մենք չենք, երկիրն այսօր տարածաշրջանում ինտեգրման խնդիր ունի: Եվ ամենակարևորը՝ պետությունից ֆինանսական միջոցների որոշակի մասը պետք է տրամադրվի մարզերին, հատկապես՝ փոքր քաղաքներին»:

Շատերն էլ պնդում են, որ քաղաքացիները պետք է ավելի պահանջկոտ լինեն քաղաքի պաշտոնյաների նկատմամբ:

«Գործազրկության հիմնախնդիր լուծման համար նախառաջ պետք է ժողովուրդը պատրաստ լինի քաղաքապետարանի և ավագանու առջև հստակ ու որոշակի պահանջներ դնելու: Իսկ քաղաքապետարանն ու քաղաքային ավագանին էլ կառավարության հետ սերտորեն համագործակցելով, հետևողական աշխատանքով պետք է գտնեն լուծման ուղիներ, - կարծում է քաղաքային ավագանու մեկ այլ անդամ, Մոր և մանկան առողջության կենտրոնի տնօրեն Սիմոն Մանուկյանը: - Քաղաքային բյուջեի վերջին ավելացումների պայմաններում պետք է առավել մեծ ուշադրության արժանանան սոցիալական հարցերը»:

Ավագանու մեկ այլ անդամ՝ Դերենիկ Դովհան-նիսյանը, համոզված է, որ Արթիկի տարածաշրջանն ունի շինարարական արդյունաբերությունը խթանելու լուրջ ներուժ, քանի որ առկա է թե՛ գործարանների շենքերի և թե՛ մարդկային ռեսուրսը:

«Տեխնիկական գիտելիքներ ունեցող շատ ինժեներներ աշխատանք չունեն, - պնդում է նա, - վերջիններիս ուժերն էլ պիտի անպայման օգտագործվեն՝ կոնկրետ ուղղություն տալով ու սատարելով նրանց»:

Արթիկի քաղաքապետ Հմայակ Աբրահամյանը պնդում է, որ Արթիկը պետք է հեռանկարային ռազմավարություն մշակի՝ ներդրողներին տարածաշրջան բերելու նպատակով:

«Այսօր իրականացվում է հեռանկարային զարգացման ծրագրի մշակման աշխատանք, որը պահանջում է մեծ ֆինանսական միջոցներ: Ուղիներ ենք փնտրում տնտեսության զարգացումը հնարավորինս արդյունավետ իրականացնելու համար, - ասում է քաղաքապետը: - Հարցի միակ լուծումը արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկումն է, արդյունաբերության ճյուղերի ստեղծումը, որը միայն քաղաքապետարանի միջոցներով անհնար է իրականացնել»:

Նա նշում է, որ մի քանի ներդրողներ ուսումնասիրել են Արթիկը, սակայն այն մեծ ուշադրության դեռևս չի արժանացել:

«Լուրջ խնդիր ունենք՝ ներդրումների հետ կապված: Մարդիկ գալիս, ուսումնասիրում են տեղի հնարավորությունները, պայմանները, սակայն դեռևս արժանաքներ չկան: Պատճառները բազմաթիվ են՝ արտադրված ապրանքատեսակների իրացումից, բնակլիմայական պայմաններից մինչև էկոլոգիական հիմնախնդիրներ: Իսկ հիմնվել միայն հանքարդյունաբերության վրա՝ Արթիկի համար այսօր արդեն բավարար չէ»:

Անտեսված մեծամասնություն.

Բարձր պաշտոնները դեռևս անհասանելի են կանանց

Գայանե Արահանյան
«Արմենիա Նաուլի» թղթակից

«Իմ կարծիքով՝ քաղաքականությունը տղամարդկանց համար է». սրանք տղամարդու խոսքեր չեն, այլ մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանինը, ով նախարարի բարձր պաշտոնին արժանացած եզակի կանանցից է: Սա վառ օրինակ է, որ ցույց է տալիս, թե որքան խորն է արմատացած սեռային բաժանման ընկալումը Հայաստանում՝ ստեղծելով մի անտեսանելի պատնեշ, որը դուրս է մղում կանանց քաղաքականության մեջ բարձր պաշտոններ զբաղեցնելուց:

Թեպետ կանայք կազմում են բնակչության մոտ 52 տոկոսը, սակայն պետական պաշտոնները բախշված են խիստ անհամաչափ՝ ստեղծելով զենդեռային անհավասարության մի բուրգ. որքան բարձրանում ենք, այնքան կանանց թիվը նվազում է: Ազգային ժողովում կանայք կազմում են մոտ 9 տոկոսը (անգամ Իրաքում ու Նիգերիայում տոկոսներն ավելի բարձր են):

Անկախությունից հետո՝ 16 տարիների ընթացքում, միայն երեք կին է նախարարի պաշտոն զբաղեցրել, այն էլ՝ բավական կարճ ժամանակով, իսկ այսօր 17 նախարարներից միայն մեկն է կին: Միայն վերջերս Շիրակում նշանակվեց կին մարզպետ, մինչդեռ քաղաքապետի պաշտոնը դեռ անհասանելի է կանանց:

Որոշակի տեղաշարժ է նկատվել տեղական ինքնակառավարման մարմիններում. եթե 2005-ին միայն 16 կանանց էր վստահվել ղեկավարել գյուղ, ապա այսօր 866 գյուղերից 23-ն ունի կին գյուղապետ:

Քաղաքային կառավարչության համակարգը ևս մի զենդեռային բուրգ է, որի փոխնախարարի բարձր պաշտոնով զազաթ հասնելու ճանապարհը հաղթահարել է կանանց միայն 8 տոկոսը: Միջին կառավարման պաշտոնների շարքում, ինչպիսին են աշխատակազմի ղեկավարները կամ վարչության պետերը, կանայք 21 տոկոս են կազմում, մինչդեռ բուրգը հիմնված է կանանց աշխատուժի վրա. ամենացածր վարձատրվող ոչ կառավարական պաշտոններում կանայք 62 տոկոս են կազմում:

Քաղաքականություն մտած շատ կանայք կարծում են, որ ղեկավար պաշտոններում ներգրավելու հիմնական խոչընդոտը զենդեռային դերերի խիստ բաժանման ավանդական ընկալումն է:

«Կանանց և տղամարդկանց ավանդական տարանջատումը դեռևս առկա է և ունի լուրջ ազդեցություն,- ասում է երկրի միակ մարզպետ Լիդա Նանյանը, ում ղեկավարած մարզում՝ Շիրակում, միայն մեկ կին գյուղապետ կա: - Խնդիրն այն չէ, որ մարդիկ կողմ չեն քվեարկել կին թեկնածուին, այլ որ կանայք չեն առաջադրում իրենց թեկնածուները»:

Նանյանն իրեն համարում է «գործամուլ» և նշում, որ միշտ ստիպված է եղել է ավելի շատ և լավ աշխատել, քան իր տղամարդ գործընկերները: Աշխատանքային գործունեության ընթացքում տարբեր խոչընդոտներ հաղթահարելով՝ ավագ մասնագետից հասել է տնտեսական վարչության պետի, իսկ այնուհետև՝ 1990-ականներին, Գյումրու հարկային ծառայության պետի պաշտոնին, և այդ պաշտոնում դիմակայել 16 տարի:

«Մարդիկ սովորաբար ներում են տղամարդկանց սխալները,- ասում է նա: - Սակայն, եթե կինն է սխալ գործում, ապա բուրգն ասում են, որ դա պայմանավորված է նրա՝ կին լինելու հանգամանքով»:

«Կին գյուղապետը գյուղի մասին մտածում է այնպես, ինչպես կմտածեր իր ընտանիքի մասին, պարզապես սա մեծ ընտանիք է: Մայրն ավելի լավ գիտի, թե ինչն է առաջնային իր ընտանիքի, երեխաների համար»:

Լիդա Նանյան
Շիրակի մարզպետ



Լուսնակալը՝ Ֆոտոլուրի

«Որքան մեծ է երկրում տոտալիտար ուժը, այնքան կանայք քիչ են ընդգրկված որոշումների ընդունման մակարդակում, բայց միևնույն ժամանակ, որքան կանայք շատ են օրենսդիր և գործադիր մարմիններում, այնքան պակաս ուժային է դառնում երկիրը»:

Լարիսա Ավաբերդյան
Աժ պատգամավոր,
«Ժառանգություն» կուսակցություն,
Մայիսի օմբուդսմեն



Լուսնակալը՝ Ֆոտոլուրի

«Քաղաքականությունն ունի ընդգծված տղամարդու դեմք, որը բնավ հաճելի չէ, և հասարակությունը զգում է այն փոխելու կարիք»:

Ռուզան Խաչատրյան
Հայաստանի ժողովրդական
կուսակցություն



Լուսնակալը՝ Ֆոտոլուրի

Կարծրատիպերը և «ապակյա առաստաղը» կոտրելու համարձակությունը սակայն դեռ բավարար չէ հաջողության հասնելու համար, դրան հաջորդում են սոցիալական ու տնտեսական խնդիրները, պնդում են այն եզակի կանայք, որոնց հաջողվել է դա անել:

«Կանայք լուրջ ներուժ ունեն, բայց չունեն նույնքան լուրջ ֆինանսական միջոցներ, իսկ բիզնեսում և քաղաքականության մեջ բարձունքի հասնելու համար ֆինանսական աներևակայելի ներդրումներ են հարկավոր», - ասում է պատգամավոր Գոհար Ենոքյանը՝ և խորհրդային, և՛ նոր ժամանակների փորձառու բիզնեսավորները:

Ենոքյանն ավելի քան 30 տարի է՝ ղեկավարում էր «Գարուն» կարի ֆաբրիկան, իսկ դեպի տնօրեն տանող ճանապարհը սկսել է ցածր ղեկավարման պաշտոնից՝ արտադրամասի վարպետից, և ընտանիքի, որդուն մեծացնելու հոգսը չի խանգարել նաև աշխատանքում հաջողությունների հասնելու:

«Խորհրդային տարիներին կանանց խրախուսում էին, իսկ հիմա

ո՞ր օլիգարխը կցանկանա իր կնոջը կամ դստերը տեսնել իր ֆիրմայի տնօրենի աթոռին՝ ոչ մեկը,- վստահեցնում է Ենոքյանը: - Իսկ այն կանայք, ովքեր ունեն այդ ներուժը, չունեն տնտեսական հնարավորություն»:

Չնայած կանայք առավել շատ հավասարություն էին վայելում խորհրդային ժամանակներում՝ շնորհիվ հատուկ քաղաքականության, որ պահանջում էր կանանց հավասարաչափ ներկայացվածություն քաղաքականության և արտադրության մեջ, սակայն շատ պատմաբաններ պնդում են, որ այդ ձեռքբերումն արհեստական էր: Խորհրդային Միության փլուզման հետ վերացավ նաև կանանց էմանսիպացման քաղաքականությունը՝ թողնելով նրանց միայնակ հաղթահարելու հայրիշխանական ավանդական մտածելակերպի մարտահրավերները:

Գուցե միֆթարիչ է, որ հայ կանայք միակը չեն աշխարհում, որ բախվում են կարծրատիպերի: Միջին հաշվով աշխարհում պատգամավորական տեղերի միայն 17,7 տոկոսն են զբաղեցնում

կանայք, իսկ պետության ղեկավար է միայն 5-ը: Վերջերս ԱՄՆ-ում ժողովրդավար ընտրողները նույնբերի նախագահական ընտրություններին մասնակցելու նախապատվությունը տվեցին երիտասարդ, ավելի քիչ փորձառու տղամարդու և ոչ թե ավելի փորձառու կնոջը:

«Տղամարդիկ են ձևավորում այն առասպելը, թե կանայք չեն հետաքրքրվում քաղաքականությամբ, և քաղաքականությունը կնոջ գործը չէ: Սա մտածված ներմուծված գաղափարախոսություն է», - ասում է Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի (ՀԿԿԱ) հիմնադիր նախագահ Ջենմա Հասարթյանը: Չնայած տեսականորեն հասարակության համար միանշանակ մերժելի չէ կին առաջնորդների գաղափարը, սակայն գործնականում երկիրը դեռևս շատ հեռու է կանանց ղեկավար պաշտոններում տեսնելու պատրաստակամությունից:

Հանրահայտ «Գեյլափի» 2007-ին անցկացրած հարցումները վկայում են, որ հայերի մեծ մասը՝ 68 տոկոսը, կարծում է, թե կանայք չպետք է ներգրավվեն քաղաքականության մեջ: Սակայն Հասարթյանի ղեկավարած կազմակերպության պատվերով անցկացված մեկ այլ հարցման արդյունքներն էլ վկայում են, որ տղամարդկանց 60 և կանանց 83 տոկոսը հավանություն է տալիս կանանց՝ քաղաքականության մեջ ներգրավմանը, իսկ կանանց 64 և տղամարդկանց 43 տոկոսն էլ կին նախագահական թեկնածուի օգտին քվեարկելու պատրաստակամություն է հայտնել: Այս թվերը գերազանցում են երեք տարի առաջվա տվյալները:

Մինչդեռ նույն հետազոտությունից պարզվել է, որ այն հարցին, թե կցանկանա՞րք, որ ղեկավար պաշտոնին ընտրվող լինե՞ր ձեր քույրը կամ մայրը, հարցվածների կեսից ավելին՝ 55 տոկոսը, պատասխանել է «ոչ»:

Քաղաքականության ասպարեզում կանանց առաջխաղացումը խոչընդոտող հիմնական գործոններից, ըստ հարցվածների, առաջին տեղում ազգային մտածելակերպն է (30,3%):

ՀԿԿԱ փոխնախագահ Լիլիթ Զաքարյանն ասում է, որ զենդեռային կարծրատիպերը դեռ շատ խորն են մեր հասարակության մեջ:

«Շարքային ընտրողը քվեաթերթիկում տեսնելով կնոջ և տղամարդու անուն, եթե երկուսն էլ իրեն անծանոթ են, մեխանիկորեն կընտրի տղամարդուն և ոչ թե նրա համար, որ նախանձում է կան դեմ է կին թեկնածուին, այլ պարզապես նա ենթագիտակցությամբ խորքում միայն տղամարդուն է ընկալում որպես քաղաքական գործիչ ու ղեկավար», - ասում է պատմական գիտությունների թեկնածու Զաքարյանը:

Հայաստանի ժողովրդական կուսակցության անդամ Ռուզաննա Խաչատրյանը հակադարձում է՝ մշելով, որ ընտրություններին մասնակցելու փորձը ցույց է տվել, որ հասարակությունն առավել պատրաստ է ընդունել կին առաջնորդին, բայց քաղաքական վերնախավը դա թույլ չի տալիս:

Երբ հինգ տարի առաջ նա իր թեկնածությունը դրեց Երևանի Կենտրոն համայնքի ղեկավարի ընտրություններում, նրա տղամարդ թեկնածուի հակառակորդը հայտարարեց. «Մի՞թե ես թույլ կտամ կնոջը հաղթել ինձ»:

«Հասարակության կարծիքի դրական փոփոխությանը նպաստել են հենց իրենք՝ տղամարդ քաղաքական գործիչները, քանի որ քաղաքականությունն ունի ընդգծված

տղամարդու դեմք, որը բնավ հաճելի չէ, և հասարակությունը զգում է այն փոխելու կարիքը», - ասում է Խաչատրյանը:

Նույն ուսումնասիրությունը փաստում է, որ հարցվածների 42 տոկոսը կարծում է, թե կանայք մեղմորդ ազդեցություն կունենան քաղաքականության վրա՝ առավել լուրջ ուշադրություն դարձնելով սոցիալական խնդիրներին:

«Կին գյուղապետը գյուղի մասին մտածում է այնպես, ինչպես կմտածեր իր ընտանիքի մասին,- ասում է Նանյանը: - Ուղղակի սա մեծ ընտանիք է: Մայրն ավելի լավ գիտի, թե ինչն է առաջնային իր ընտանիքի, երեխաների համար»:

Չորս անգամ հաջողությամբ պատգամավոր ընտրված տնտեսագիտության դոկտոր Հերմինե Նաղդալյանը կանանց առաջխաղացման խոչընդոտների շարքում տեսնում է հենց իրենց՝ կանանց:

«Կանանց անվստահությունն է ձևավորում տղամարդկանց վստահությունը, հենց կանայք են կին ակտիվ գործիչներին խոչորացուցող մայր Նաղդալյանը՝ շեշտելով, որ իր հաջողությունների գրավականը իր ընտանիքի աջակցությունն ու խրախուսանքն է:

Խոչընդոտների շարքում հարցվածները երկրորդ տեղում (15,5%) նշում են կոռուպցիան քաղաքականության ոլորտում, այսինքն՝ կանայք չափազանց «լավ» են բիզնեսի և քաղաքականության կոռումպացված համակարգում խաղալու համար:

Նույնը շեշտում է պատգամավոր Լարիսա Ավաբերդյանը՝ ընդգծելով, որ կանանց դուրս մղողը ոչ թե ազգային կարծրատիպերն են, այլ կառավարման ոչ ժողովրդավար մեխանիզմները:

«Սա օրինաչափ է. որքան մեծ է երկրում տոտալիտար ուժը, այնքան կանայք քիչ են ընդգրկված որոշումների ընդունման մակարդակում, բայց միևնույն ժամանակ, որքան կանայք շատ են ընդգրկվում օրենսդիր և գործադիր մարմիններում, այնքան պակաս ուժային է դառնում երկիրը», - ասում է Մայիսի օմբուդսմենը:

Քաղաքականության հայրիշխանական ավանդույթը խախտել է խորհրդարանում «ամենաֆեմինիստ» կուսակցությունը՝ «Ժառանգությունը», որի յոթ անդամներից երեքը կանայք են, մինչդեռ ամենամեծ՝ «Հանրապետական» խմբակցության 64 անդամներից միայն երկուսն է կին:

«Ամենար է ժողովրդավարության հասնել» առանց ժողովրդի կեսին ծայն տալու», - ասում է «Ժառանգության» ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը:

Նանյանն ասում է, որ քաղաքականության մեջ կանանց հաջողության բանալին այն է, որ նրանք գործեն ավելի բաց և հասանելի, քան ավանդաբար գործում են հայ տղամարդ քաղաքական գործիչները: Նա Գյումրու իր գրասենյակում շաբաթը մեկ անցկացնում է բաց դռների օր, և տեղի բնակիչներից շատերն ասում են, որ նա հետևողական է ու առավել սրտացավ է հիմնախնդիրների լուծման հարցում: Միշտ չէ, որ հեշտ է դա անելը, քանի որ Շիրակը երկրի ամենաաղքատ մարզն է և ունի ամենասուր սոցիալական կարիքները:

«Առաջին կին մարզպետ լինելը մեծ պատասխանատվություն է,- ասում է նա: - Եթե ես ձախողեմ, ապա հետագայում մտավախություն կունենան նման պաշտոններում ավելի շատ կին պաշտոնյաների նշանակելը»:

Արդյոք ձեր քվեարկությունը գաղտնի՞ է. Ոչ մի թաքնված տեսախցիկ Միայն զինվորների քվեարկությունը երաշխավորված չէ

Արմինե Ավագյան
«Սյունյաց երկիր» թերթ, Կապան

Փետրվարին կայացած նախագահական ընտրություններում Լոռու մարզի Լեռնապատ գյուղում նկատվել է, որ ընտրողներն իրենց կամքով քվեաթերթիկը ցույց են տվել Սերժ Սարգսյանի վստահված անձին և գյուղապետին: Լոռու մարզի մեկ այլ գյուղում քվեախցիկները դրված են եղել սեղանին՝ դեմքով դեպի հանձնաժողովը, և քվեախցիկների ներքևի մասը բաց է եղել: Քվեարկելիս քաղաքացիները քվեաթերթիկն այնպես են պահել, որ հանձնաժողովին տեսանելի լինի, թե նախագահի որ թեկնածուի օգտին է կատարվում նշումը:

Հնարավոր է, որ այս անգամ էլ, աշնանը կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին գնացող մարդկանցից պետական պաշտոնյաները պահանջեն ու հավատացնեն, որ կարող են իմանալ, թե ինչպես են նրանք քվեարկել: Սակայն իրականում դա օրենքի կոպիտ խախտում է:

Ըստ միջազգային դիտորդների՝ վերջին մի քանի ընտրությունների ընթացքում քվեարկության գաղտնիության ապահովման վիճակը բարելավվել է: ԵԱՀԿ/ԺՅՄԻԳ-ի վերջին զեկույցը փաստում է, որ քվեարկության գաղտնիությունը լիովին պահպանվել է այցելած տեղամասերի 87 տոկոսում և հիմնականում պահպանվել է մոտ 10 տոկոսում:

Սակայն արձանագրված խախտումները բավական կոպիտ են եղել. 23 տեղամասերում (2 տոկոս) նկատվել է, թե ինչպես են ընտրողները արդեն քվեարկած թերթիկը ցույց տալիս մեկ այլ անձի և քվեարկում քվեախցից դուրս: «Խմբակային քվեարկության» (քվեախցում միաժամանակ մեկից ավելի անձի ներկայություն) դեպքեր են արձանագրվել այցելած տեղամասերի 9 տոկոսում:

Պետական պաշտոնյաները և բազմաթիվ թեկնածուներ մի շարք մտացածին պատմություններով հավատացրել են ընտրողներին, թե թաքնված տեսախցիկների կամ համակարգչի միջոցով հնարավոր է ստուգել քվեաթերթիկների գրառումները:

Ո՞րն է ճշմարտությունը:
Ճշմարտությունն այն է, որ միայն դուք կարող եք տեսնել ձեր քվեարկությունը, և անհնար է իմանալ, թե ում օգտին եք քվեարկել, եթե, իհարկե, չեք ցանկանում, որ դա հայտնի դառնա:

Ինչն է ճիշտ, ինչն՝ մտացածին: Մենք հավաքել ենք մի շարք պատմություններ՝ խմբավորելով դրանք հետևյալ բաժիններում:

ՀՆԱՐԱՎՈՐ ՉԷ

Համակարգիչը կատուզի ձեր խաբեությունը: Մարդկանց մինչև ընտրության օրը ստիպում են ստորագրել ինչ-ինչ ցուցակներում՝ որոշ թեկնածուների անվան դիմաց, գրանցում ընտրողի անձնագրի տվյալները և համոզում, որ եթե այդ ձևով չքվեարկեն, համակարգիչը կպարզի, որ խաբել են: «Թրանսփարենսի ինթերնեյշնլ Դաշնաստան» կազմակերպության լրատվամիջոցների գծով պատասխանատու Վախթանգ Սիրադեղյանն ասում է, որ այս անհեթեթ միտքը տարածվել է ոչ միայն գյուղերում 2007 թ. մայիսի Աժ ընտրություններին նման կերպով ահաբեկել էին անգամ Գյումրու ուսուցիչներին:

«Դա հոգեբանական գործոն է. երբ դու քո ստորագրությունը տալիս ես փողի կամ պարզապես խոստման դիմաց, պարտավորվածություն են գզում, և այս հոգեբանական գործոնն իրոք ազդում է մարդկանց վրա», - պարզաբանում է Սիրադեղյանը:

Իրականում տեխնիկապես ոչ մի համակարգիչով հնարավոր չէ իմանալ, թե ում է պատկանում տվյալ քվեաթերթիկը: Քվեաթերթիկները որևէ կերպ համարակալված չեն, և քվեատուփի մեջ զցելուց հետո հնարավոր չէ ստուգել:

Տարբեր գույնի թանաք օգտագործելը ցույց կտա ձեր քվեարկությունը: 2007 թ. Աժ ընտրությունների ժամանակ Սիսիանում ուսուցիչներին ստիպել էին գունավոր գրիչներով քվեարկել, որպեսզի հավաստիանան, որ նրանք խոստացած թեկնածուին են ձայն տվել: Նման դեպքերում պետք է օգտագործել խցիկում պարտադիր առկա գրիչը (անգամ կարող եք ունենալ ձեր սովորական կապույտ գրիչը): Այս դեպքում քվեատուփի հարյուրավոր քվեաթերթիկներից ոչ ոք չի կարող տարբերակել, թե ո՞րն է ձեր:



Տեսն և սովորիչ: Փետրվարի 19-ի նախագահական ընտրությունները Արթիկում: Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամի դիտորդների կողմից արձանագրված այս պատկերը ակնհայտ խախտման օրինակ է, որը կարող է վտանգել ձեր քվեարկության գաղտնիությունը. ընտրատեղամասում միաժամանակ 15-ից ավելի անձանց ներկայությունն արգելվում է:

Կուսակցությունները տեղեկացնում են ձեզ՝

գնալ և քվեարկել: Վախթանգ Սիրադեղյանը հիշեց նաև, որ խորհրդարանական ընտրություններում Արտաշատ քաղաքում Հանրապետական և «Բարգավաճ Հայաստան» կուսակցություններն ըստ հիմնարկ-ձեռնարկությունների ցուցակներ էին կազմել և նշել, թե այսինչ տեղամասում տվյալ հիմնարկի աշխատողները որ ժամին պիտի գան քվեարկության: Սա ևս կատարվել է մարդկանց վրա հոգեբանական ճնշում գործադրելու համար, սակայն, միևնույն է՝ այս ձևով էլ հնարավոր չէ պարզել քվեաթերթիկի տիրոջ ինքնությունը:

Կուսակցությունները վճարում են ձեզ քվեարկելու համար, այնուհետև բերում ընտրատեղամաս միկրովտորոսով: Մեքենաներով ընտրողներին բերում են տեղամաս ընտրելու, ինչպես եղավ փետրվարի նախագահական ընտրությունների ժամանակ Կապանում: Սա կրկին հոգեբանական գործոն է. եթե քարոզարշավի մասնակիցները տրանսպորտով քո տեղափոխումն ապահովում են ու դեռ մեքենայի մեջ էլ ընտրակաշառք տալիս, կրկին կաշկանդված ես և մտածում ես, որ ձայնդ պիտի տվյալ թեկնածուին տաս:

ԹՈՉ ՀԱՎԱՆԱԿԱՆ, ՈՉ ԻՐԱՏԵՍԱԿԱՆ

Քվեախցիկներում տեղադրվել են տեսախցիկներ: Տեսականորեն հնարավոր է տեղամասերում կամ հենց քվեախցիկներում նկարահանող տեսախցիկներ տեղադրել, բայց ավելի հեշտ է ստիպել բոլորին պարզապես հավատալ, որ դա արվել է: «Ընտրությունը քոնն է» կազմակերպության փոխնախագահ Խաչիկ Ոսկանյանը պարզաբանում է, որ օրենքով արգելվում է տեսախցիկներով ընտրական ողջ գործընթացը նկարահանել, դիտորդներին և վստահված անձանց թույլ է տրվում նկարահանել միայն ձայների ամփոփման փուլը՝ ժամը 20:00-ից հետո, երբ քվեարկությունն ավարտված է: 2007 թ. սկզբին ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ կատարելու ժամանակ «Օրինաց երկիր» կուսակցությունն առաջարկեց ընտրությունների

ողջ ընթացքը տեսանկարահանելու և ընտրատեղամասերում բացառելու նպատակով նկարահանող սարքեր տեղադրել բոլոր տեղամասերում: Պետական կառույցներն ասացին, որ նման գումար Հայաստանը չունի:

Որքա՞ն գումար է հարկավոր նման տեսախցիկներ ձեռք բերելու և երկրի 1923 ընտրատեղամասերում տեղադրելու համար: Երևանի խանութներում կատարած փոքր հարցումից պարզվեց, որ ամենամատչելի գնով փոքր նկարահանող տեսախցիկն ունի լուցկու տուփի չափ և արժի մոտ 90 դոլար: Մի տեղամասում մեկը բավարար չէ, իսկ երկուսի դեպքում ընդհանուր արժեքը կկազմի մոտ 350000 դոլար: Նաև պետք է տեսախցիկի դիրքը ճիշտ լինի. եթե այն տեղադրված լինի քվեախցիկի վերևում, քվեարկողը կարող է այն ծածկել մեջքով կամ մարմնով: Եթե տեսախցիկը պատի մեջ է, դժվար կլինի այն թաքցնել:

Քվեախցիկները բաց են, և մարդիկ կարող են տեսնել ձեր քվեարկությունը: Արդեն մոտ 2 տարի է, քվեախցիկները բաց են. դա արվել է քվեարկության գործընթացը տեսանելի դարձնելու համար և նպատակ չունի բացահայտելու, թե ինչպես եք քվեարկում: «Ընտրությունը քոնն է» կազմակերպության փոխնախագահ Ոսկանյանը տեղեկացրեց, որ ԸՕ վերջին փոփոխություններով նախատեսվում է դրա դեմն առնելու համար քվեախցիկներն այնպես տեղադրել, որ ընտրողը լինի մեջքով դեպի պատը, դեմքով՝ դեպի մարդիկ:

«Բայց էլի մանրեղու տեղ են թողել. օրենքում նշվում է՝ «ըստ հնարավորության», ու, դրանից օգտվելով՝ տեղամասերը կարող են կահավորել ըստ ցանկության», - նշում է Ոսկանյանը: Բայց թե՛ դիտորդները, թե՛ լրագրողներն արձանագրել են, որ վերջին ընտրությունների ընթացքում ընտրատեղամասերում եղել են կուտակումներ, որոնք անհնար են դարձրել գաղտնի քվեարկություն: Ամեն դեպքում դիտորդներն ամենուր են, և եթե ինչ-որ մեկը նախ է ձեր քվեաթերթիկը, դա ակներև կլինի:

ՀՆԱՐԱՎՈՐ Է

Քվեախցիկում ձեր քվեաթերթիկը բջջային հեռախոսով նկարել: Իհարկե, դա օրինական չէ, բայց նախորդ խորհրդարանական ընտրությունների ընթացքում ԵԱՀԿ դիտորդներն արձանագրել են հեռախոսով նկարելու դեպքեր: Վախթանգ Սիրադեղյանն ասում է, որ բջջայինով նկարելն արգելված է:

Քվեարկողի ամենամեծ պաշտպանությունը գաղտնիության ապահովումն է: Այս ամենը տեղի է ունենում միայն, երբ ընտրողը գործարքի մեջ է մտնում, սակայն քվեարկության գաղտնիությունը հնարավոր է լիարժեք ապահովել մոյնիսկ գումար վերցնելու դեպքում: Ի միջի այլոց, քվեարկության համար փող վերցնելը քրեական պատասխանատվություն է ենթադրում, և եթե դուք ներքաշվել եք նման գործարքի մեջ, ապա հանցավոր եք համարվում:

Ձինվորների քվեարկության գաղտնիությունը նույնպես խախտվում է ընթացքում:

Նախագահական ընտրություններում Կապանի Ծավ գյուղում մի զինվորական սպա քաղաքացիական հագուստով գտնվել է ընտրատեղամասում ու ստիպել զինվորներին բաց քվեարկել: Ըստ դիտորդական զեկույցների՝ գաղտնիության ապահովման ամենամեծ խախտումը Հայաստանի ընտրակարգում ներառում է զինվորականությանը: Ձինվորը, ի վերջո, պատժվելու ավելի մեծ հավանականություն ունի. տեղամասից նա ոչ թե տուն, այլ գործուհու է վերադառնում հրամանատարի հետ, և 24 ժամ վերջինիս ձեռքում է գտնվում նրա կյանքը:

2005 թ. սահմանադրական հանրաքվեի ժամանակ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը բաց քվեարկեց՝ բոլորին ցույց տալով իր քվեաթերթիկը: Դրանով, ըստ էության, նա օրինակ էր ցույց տալիս մյուս ընտրողներին: Ոսկանյանը հիշեցնում է, որ Հայաստանը նաև Կոպենհագենյան կոնվենցիայի անդամ է, որով փակ, գաղտնի քվեարկությունը ոչ միայն ընտրողի իրավունք է, այլև՝ պարտականությունը: Բաց քվեարկված քվեաթերթիկները պետք է անվավեր ճանաչվեն:

Լուսանկարը՝ Ալեքսեյ Կոնյուխով

Քվեարկությունը Հայաստանում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում

Տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է՝ սեփական պատասխանատվությամբ բնակիչների բարօրության նպատակով լուծելու տեղական նշանակության հարցերը:

Քո քվեարկությամբ դու մասնակցում ես քո համայնքի կառավարմանը: Օգտվիր քո սահմանադրական իրավունքից:

ՔՈ ՉԱՅՆԸ ՎՃՌՈՐՈՇ Է

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները տեղի կունենան 2008 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին հանրապետության ողջ տարածքում

1

Գրանցում




✓ Գրանցման սեղանի մոտ ներկայացրու անձը հաստատող փաստաթուղթ:

✓ Քո անունը ընտրողների մատյանում գտնելուց, անձնագիրը ստուգելուց և անձնագրի տվյալները լրացնելուց հետո դու պետք է ստորագրես մատյանում:

✓ Հետևեք, որ այդ մույն պատասխանատու անդամը ստորագրի ձեր ստորագրության դիմաց՝ իր ստորագրության համար նախատեսված համապատասխան սյունակում:

Հիշի՛ր Անձը հաստատող փաստաթուղթ են համարվում անձնագիրը, անձնագրին փոխարինող փաստաթուղթը, զինվորական սպաների և ենթասպաների համար նաև՝ զինվորական վկայականը, իսկ այլ զին-ծառայողների համար՝ զինվորական գրքույկը:

Հիշի՛ր Եթե անձնագրի վավերականության ժամկետն ավարտվել է, ապա դա հինք չէ ձեզ քվեարկության չթողնելու համար:



Իմացի՛ր «Կեղծ տվյալներ հայտնելու, կեղծ փաստաթուղթ ներկայաց-նելու, կամ որևէ այլ եղանակով մեկից ավելի անգամ, կամ այլ անձի փոխարեն քվեարկելը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 1 (մեկ) տարի ժամանակով, կամ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի չափով»:

ՀՀ ՔՕ, հոդված 133.4

2

Քվեաթերթիկ եւ քվեարկության ծրար ստանալը

✓ Ստացիր մեկ քվեաթերթիկ և մեկ քվեարկության ծրար (երկրորդ քվեաթերթիկը քվեարկության ծրարով կտրվի այն դեպքում, եթե միաժամանակ տեղի են ունենում համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ, այդ քվեաթերթիկները տարբեր գույների են)

Հիշի՛ր Որ քվեաթերթիկի հակառակ կողմում դրված լինեն տեղական ընտրական հանձնաժողովի 3 (երեք) անդամների ստորագրությունները:

Իմացի՛ր «Ընտրողին՝ թեկնածուներից որևէ մեկի օգտին կողմ կամ դեմ, կամ բոլոր թեկնածուներին դեմ քվեարկելու, ընտրու-թյուններին մասնակցելու կամ ընտրություններին մասնակցելուց հրա-ժարվելուն հարկադրելը, որը կատարվել է գույքին վնաս պատճառելու սպառնալիքով, ընտրակաշառք տալով, բռնությամբ կամ բռնություն գոր-ծադրելու սպառնալիքով կամ զենք գործադրելով՝ պատժվում է ազա-տազրկմամբ՝ 2-5 (երկուսից հինգ) տարի ժամանակով, կամ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի մինչև հինգհարյուրապատիկի չափով»:

ՀՀ ՔՕ, հոդված 133.5

3

Քվեարկության խցիկում

✓ Քո նախընտրած թեկնածուի նշագրման վանդակում դիր այս նշանը [V]: Կատարիր քվեաթերթիկում միայն մեկ նշում:

✓ Այս նշումը [V] կատարելուց հետո քվեախցիկում ծալիր քվեաթերթիկ(ներ)ը:

✓ Տեղադրիր այն քվեարկության ծրար(ներ)ի մեջ (եթե միաժամանակ տեղի են ունենում համայնքի ղեկավարի ու ավագանու անդամների ընտրություններ, ապա քվեաթերթիկները տեղադրվում են առանձին ծրարներում՝ ըստ գույների համապատասխանությամբ):



Հիշի՛ր Եթե կարծում ես, որ քվեաթերթիկ(ներ)ը սխալ ես լրացրել, ապա դիմիր հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ(ներ) ստանալու համար:

Հիշի՛ր Եթե չես կարող ինքնուրույն լրացնել քվեաթերթիկ(ներ)ը, դիմիր հանձնաժողովի նախագահին և քվեախցիկ հրավիրիր մեկ այլ քաղաքացու, որը չպետք է լինի թեկնածուի վստահված անձ:

Իմացի՛ր «Քվեարկության գաղտնիությունը խախտելու նպատակով ընտրողին քվեարկության արդյունքը հայտնելուն հարկադրելը, քվեարկության արդ-յունքը բացահայտելու նպատակով քվեարկած քվեաթերթիկը ստուգելը, քվեարկու-թյան խցիկ մուտք գործելը, ինչպես նաև քվեարկության գաղտնիությունը որևէ այլ եղանակով խախտելը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև 2 (երկու) տարի ժամանա-կով, կամ տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից մինչև հինգհարյուրապատիկի չափով»:

ՀՀ ՔՕ, հոդված 133.6

4

Քվեատուփի մոտ

✓ Հանձնաժողովի անդամը կկնքի քվեարկության ծրար(ներ)ը:

✓ Գցիր քվեարկության ծրար(ներ)ը քվեատուփ(եր)ի մեջ, երբ քվեատուփ(եր)ի համար պատաս-խանատու անձը կբացի քվեա-տուփ(եր)ի ճեղքը:

Հիշի՛ր Քվեարկության ծրար- (ներ)ը քվեատուփ(եր)ի մեջ գցելուց հետո դուրս արի տեղամասային կենտրոնից:



5

Ի գիտություն ընտրողի

✓ Քվեարկության օրը դուք իրավունք չունեք տեղամասային կենտրոնում հայտարարել, թե որ թեկնածուի օգտին եք պատրաստվում քվեարկել կամ որ թեկնածուի օգտին եք քվե-արկել:

✓ Եթե դուք ժամը 20.00-ին քվեարկության սենյակում եք ու դեռ չեք քվեարկել, ոչ ոք իրա-վունք չունի զրկելու ձեզ քվեարկելու իրավունքից: